



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսումնական գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառության նոր ուղիների որոնում

ԱՌԱՐԿԱ

Ռուսաց լեզու

ՀԵՂԻՆԱԿ

Ղալաչյան Անի

ՄԱՐԶ

Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Նորաշենի միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1 Մանկավարժական գիտափորձի նախապատրաստում.....	6
.2 Մանկավարժական գիտափորձի նկարագրումը.....	9
3 Արդյունքների վերլուծություն և ամփոփում.....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

“Համակարգիչը մեքենա է, որը մշակում է տվյալները հրամանների ցանկին համաձայն”¹ Սա համակարգչի պարզագույն սահմանումներից մեկն է, որ կարող ենք հանդիպել համացանցում: Առաջին համակարգիչները ստեղծվել են ոչ այնքան վաղուց, 20-րդ դարի կեսերին, սակայն այսօր արդեն վերը նշված

սահմանո՞ւմը չի համապատասխանում համակարգչի իրական նշանակությանը: Այսօր արդեն համակրգիչը դադարել է սոսկ հրամաններ կատարող սարք լինելուց: Ավելին, այն ընդլայնել է ոչ միայն իր գործունեության ոլորտը, այլ նաև իր հասկացությունների համակարգը: Եթե ընդամենը մի քանի տարի առաջ մանկավարժները ուսումնասիրում էին համակարգչի դերը ուսուցման գործընթացում, ապա այսօր այս ոլորտի ուսումնասիրությունները տեղափոխվում են այլ հարթություն, քանի որ այսօր արդեն գործ ունենք ոչ թե սոսկ համակարգչի այլ համակարգչային տեխնոլոգիաների հետ: Իսկ սա անշուշտ ավելի լայն հասկացություն է:

Քանի որ համակարգչային տեխնոլոգիաներ հասկացությունը բոլորովին վերջերս է ներմուծվել կրթության ոլորտ, բնականաբար այստեղ ուսումնասիրությունները դեռևս սկզբնական փուլում են և իհարկե դեռ շատ խնդիրներ և հարցեր կան չուծված:

Կրթության բնագավառում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ուսումնասիրության խնդիրը, թերևս, արդիական է, և այս բնագավառում, մեր կարծիքով, անելիքներ դեռ կան: Հենց այս փաստն էլ առիթ հանդիսացավ հիշյալ ոլորտում ուսումնասիրություններ իրականացնելու և ուսուցման գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման դիդակտիկ պայմանները խորագրով մագիստրոսական աշխատանքի կատարման համար:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցման գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառության ոլորտները, արդյունավետությունը, համակարգչային իրառության դիդակտիկ պայմանները, ուսուցչի դերը համակարգչային տեխնոլոգիաների կիրառության միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացման հարցում, գտնել ուսուցման գործընթացը արդյունավետ և ավելի հեշտ դարձնող համակարգչային տեխնոլոգիաների կիրառության նոր ուղիներ:

Այստեղ գլխավոր խնդիրը չի կայանում նրանում, որ պետք է համակարգչային տեխնոլոգիաները ամեն գնով կիրառել ուսուցման գործընթացում, այլ նրանում, որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառման միջոցով և դրա շնորհիվ ավելի որակյալ դարձնել կրթությունն ու ավելի արդյունավետ` ուսուցման գործընթացը:

Որպես հետազոտության օբյեկտ ընտրել ենք դպրոցը, քանի որ այստեղ ուսումնասիրությունների արդյունքները ավելի տեսանելի են, ավելի շոշափելի:

Խնդիրն անշուշտ արդիական է: Այսօր համակարգիչների և համակարգչային տեխնոլոգիաների կիրառության հարցի շուրջ կարծիքները հակասական են, ոչ բոլորն են գտնում որ դրանք արդյունավետ են ուսուցման գործընթացում, և բանականաբար այստեղ առաջ է գալիս նաև խնդիր՝ ոչ միայն կիրառել, այլ նաև ապացուցել համակարգչային տեխնոլոգիաների կիրառության արդյունավետությունը:

Ելնելով աշխատանքի նպատակից պլանավորվել է լուծել հետևյալ խնդիրները.

- Օգտագործել համակարգչային տեխնոլոգիաները ուսուցման մեջ և պարզել նրանց արդյունավետությունը,
- Որոնել արդյունավետության բարձրացման նոր ուղիներ,
- Որոնել համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նոր տարբերակներ:

Աշխատանքը բաղկացած է երեք մասից՝

Մանկավարժական գիտափորձի նախապատրաստում

Մանկավարժական գիտափորձի նկարագրումը

Արդյունքների վերլուծություն և ամփոփում

Աշխատանքում ներկայացված են սեփական դիտարկումները, թե ինչպես կարելի է բարձրացնել ուսուցման գործընթացի տեսողականացման արդյունավետությունը, ինչ նոր միջոցներ կարելի է կիրառել ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար:

Հաջորդիվ ներկայացված է փորձարարական աշխատանքի նկարագրությունը և արդյունքների վերլուծությունը:

Աշխատանքն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ իմի է բերված աշխատանքում կատարված ուսումնասիրությունները, հետազոտության արդյունքները և տրված է աշխատանքի արդյունքի վերջնական գնահատական

սեփական տեսանկյունից:

1 Մանկավարժական գիտափորձի նախապատրաստում

Նախորդ գլխում նշվեց, որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառումն արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է օգտագործել այնպիսի ռեսուրսներ, որոնք ավելի շատ կարող են հետաքրքրել աշակերտներին: Հատկապես դեռահասության տարիքում գտնվող խմբին պետք է առանձնակի ուշադրություն դարձնել: Այդ իսկ պատճառով որոշվեց գիտափորձն անցկացնել դեռահասության տարիքում գտնվող աշակերտների շրջանակներում: Իհարկե, գիտակցում էի, որ դա բավականին բարդ կարող է լինել, քանի որ այս տարիքում գտնվող աշակերտների հետ աշխատանքը պահանջում է մեծ ուշադրություն և նրբություն: Այս տարիքում աշակերտները դառնում են կամակոր և անկանխատեսելի: Հաճախ ընդդիմանում են, հատկապես նորություններին: Բացի այդ այս տարիքում պետք է առավել քան երբևէ հաշվի առնել աշակերտների անձնային առանձնահատկությունները: Սակայն այս տարիքի աշակերտների հետ աշխատանքում հաջողության հասնելը կլինի մեծ ձեռքբերում: Այդ իսկ պատճառով որոշում ընդունվեց գիտափորձը անցկացնել 12-րդ դասարանում: Նախօրոք որոշված էր գիտափորձն անցկացնել երկշաբաթյա ժամկետում: Առաջին շաբաթվա ընթացքում անցկացնել ավանդական դասաժամ, հաջորդ մեկ շաբաթվա ընթացքում արդեն անցկացնել բուն գիտափորձը, որն իրենից ներկայացնում է դասաժամեր համակարգչի կիրառմամբ, ցուցադրություններ, անհատական աշխատանքների ներկայացում: Կանխավ որոշված էր աշակերտներին չասել, որ իրականացվում է գիտափորձ :

Երբ առաջին անգամ մտա 12-րդ դասարան, ունեի բազմաթիվ մտքեր, մեծ ցանկություն՝ տալ ամեն ինչ, սովորեցնել ամեն ինչ: Սակայն առաջին իսկ հանդիպումից ամեն ինչ հօդս ցնդեց: Ես հանդիպեցի մի սառը պատնեշի, որի անունն անտարբերությունն է: Առարկայի հանդեպ հետաքրքրություն ցուցաբերեց աշակերտների ընդամենը 20 տոկոսը: Սա դարձավ հիասթափության պատճառ, ինչն էլ իր հերթին դարձավ կոնֆլիկտի և փոխադարձ անտարբերության պատճառ: Այսպիսով գնալով ուսուցչի և աշակերտների միջև բացը սկսեց խորանալ, դասը անարդյունավետ ու անիմաստ ժամանակի կորուստ էր: Եվ ահա առաջին շաբաթվա ավարտին տրված թեմատիկ աշխատանքի ժամանակ հասկացա, որ բացարձակապես ոչ մի արդյունք չեմ ստացել: Այսպիսով ցածր առաջադիմություն, տնօրինության կողմից աշխատանքի ցածր գնահատական, կոնֆլիկտ և հսկայական անդունդ ինձ և աշակերտների

միջև: Հարկավոր էր ինչ որ բան մտածել, ինչ որ կերպ լուծել այս հարցը: Պարզվեց որ համակարգիչը որպես ուսուցման միջոց ևս քիչ է հետաքրքրում աշակերտների մոտ 70 տոկոսին: Հատկապես տղաների շրջանում անտարրբերությունը հասնում էր անտանելի աստիճանի: Ի վերջո ես ինքս ինձ հարց տվեցի, ինչը կարող է հետքքրել այս տարիքի դեռահասին: Հաջորդ օրը նույն հարցը տվեցի իրենց, աշակերտներին: Պատասխանը առավել քան անկեղծ էր՝ սոցիալական կայքերը: Խոսքը մասնավորապես Հայաստանում մեծ տարածում ունեցող « ֆեյսբուք սոցիալական կայքի մասին էր:

Եվ այսպես միտք առաջացավ սոցիալական կայքերը օգտագործել որպես ուսուցման միջոց: Առաջին հայացքից դժվար է պատկերացնել թե դա ինչպես է հնարավոր: Այս կայքի անունը լսելիս շատ մանակավարժներ գուցե զգվանքով և արհամարանքով շրջեն գլուխները, սակայն պետք է ձեռք առնել ցանկացած միջոց ուսուցման ավելի արդյունավետ դարձնելու համար:

Այս մասին տեղեկացրեցի աշակերտներին, հարցրեցի նրանց կարծիքը, լսեցի նրանց առաջարկությունները, տեղի ունեցավ մտերմիկ գրույց, և պատկերը կարծես մանգամից փոխվեց, ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ: Աշակերտները սկսեցին վստահել, հետաքրքրվել, ոգրորվել, և ընդթաքն ու էությունը մշակեցինք համատեղ:

Եվ այսպես գիտափորձի բուն էությունը կայանում է հետևյալում՝ սոցիալական կայքերը ծառայեցնել որպես ուսուցման միջոց, այսպիսով մուտք գործելով աշակերտին ավելի մոտ միջավայր և օգտագործելով նրա հետաքրքրությունները ստիպել նրան օգտվել ուսուցման այս միջոցից:

Գիտափորձի համար անհարժեշտ էր մեկ շաբաթ ժամանակ: Սկզբում կարծում էի թե այս ժամանակահատվածը քիչ է, ուսումնասիրություն կատարելու, եզրահանգումներ անելու և արդյունքի հասնելու համար, բայց սոցիալական կայքերի օգտագործման դեպքում ռիսկը մեծ է, և պետք է հաշվի առնել նաև հնարավոր վնասակար ազդեցությունը, այդ պատճառով ժամանակահատվածը ընտրում ենք մեկ շաբաթ, որպիզսի վնասակար ազդեցության դեպքում կարողանանք կանգ առնել, միևնույն ժամանակ չձախողելով փորձը:

Գիտափորձի համար անհրաժեշտ նախապայմաններն են՝

1. Աշակերտների տրամադրավածությունը, ինչին հաջողվեց հասնել: Ի վերջո աշակերտները մեծ սիրով ու ոգևորվածությամբ համաձայնվեցին լինել այս փորձի անմիջական մասնակիցները, հասկացան թե ինչ մեծ պատասխաստվություն կա իրենց վրա դրված:
2. Փոխադարձ վստահություն, ինչը նույնպես ապահովվեց, չնայած սկզբում աշակերտները թերահավատորեն էին վերաբերվում այն փաստին, որ այս ամենից ինչ որ բան կստացվի:
3. Համատեղ աշխատելու ունակություններ, այս հարցում միչ փոքր բարդություն առաջացավ, քանի որ քննարկումներ կազմակերպելու համար պետք է կոնկրետ ժամի բոլորը բացեին իրենց

էջը: Սակայն ինչ ինչ պատճառներով միաժամանակ չէր ստացվում: Ինչևէ այս խնդիրը ևս հարթվեց:

4. Պատասխանատվության զգացում՝ այստեղ մեծ դեր ունի թե ուսուցչի, թե աշակերտների պատասխանատվության զգացումը, քանի որ ամեն ինչ պետք է արվի ժամանակին, լիարժեք, առանց թերացումների և հապաղումների:
5. Հավատ սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Շատ կարևոր է որ աշակերտները հավատան, որ իրենք կարող են ամեն ինչ, ընդունակ են, կարող են հաղթահարել ցանկացած դժվարություն:

Գիտափորձի համար անհրաժեշտ միջոցներն են՝

- Գոնե մեկ համակարգիչ դպրոցում
- Աշակերտների տնային համակարգիչները
- Հեռախոս կամ սենսորային մինիհամակարգիչներ

Գիտափորձի համար նախօրոք մշակվեց թեմաների հերթականություն, համացանցի հարուստ բազայից դուրս բերվեց անհարժեշտ նյութեր, համացանցում ստեղծվեց անհարժեշտ էջ՝ բոլորին հասանելի:

2 Մանկավարժական գիտափորձի նկարագրումը

Երբ գիտափորձի համար ամեն ինչ պատրաստ է, այսինքն թե աշակերտը և թե ուսուցիչը հոգեպես և տեսականորեն պատրաստ են, գիտափորձը կարելի է սկսել: Գիտափորձ համար, ինչպես արդեն նշեցինք նախատեսված է մեկ շաբաթ, այսինքն հինգ դասաժամ, գումարած այն ժամանակահատվածը որը հատկացված էր անձանական համակարգիչներով աշխատելուն:

Գիտափորձը իրականացվում է 12-րդ դասարանում, ռուսաց լեզու առարկայից:

Գիտափորձի համար նախօրոք «Ֆեյսբուք» կայքում ստեղծվում է «Ռուսաց լեզու 12-րդ դասարան» խումբ էջը, որտեղ հավաքվում են այս կայքում էջ ունեցող բոլոր 12-րդ դասարանցիները:

	<p>են, ստանալ ուսուցման բարձր արդյունքներ և աշակերտների կողմից ուսուցման կյուրթի լիարժեք յուրացում:</p>
	<p>Ընդհանուր ուսուցման արդյունքում ստացվում է ուսուցչի և աշակերտի ներդաշնակ աշխատանք և համապատասխան արդյունք</p>

Քայլ 1՝ առաջին քայլը սկսվում է կիրակի երեկոյից, վերը նշված էջում, քննարկումների բաժնում տեղադրվում է թեմա «Ինչ ակնկալիքներ ունեք տվյալ գիտափորձից» : Աշակերտներից ոմանք ակնկալում էին սովորել ավելին, քան մինչ այժմ, մյուսները ցանկանում էին պարզապես հետաքրքիր ժամանակ անցկացնելով սովորել ինչ որ բան, մի խումբ մեծ կարևորություն էր տալիս տվյալ գիտափորձին, բայց կարևորն այն փաստ է, որ բոլորն էլ ցանկանում են ինչ որ բան սովորել: Տվյալ քննարկման իմաստը աշակերտների մոտ հետաքրքրություն արթնացնելն է, հաջորդ վիրտուալ դասաժամին բոլորի ներկայությունն ապահովելու համար:

Քայլ 2

Դասաժամ 1


Թեմա՝ **§Նեաբանություններ՝**

- Ուսուցիչը ներկայացնում է նյութը:
- Աշակերտների մի մասը համացանցից գտնում են համապատասխան տեղեկույթ:
- Մյուս մասը, օգտվում են բառարանից, համապատասխան բառեր գտնելու համար:
- Աշխատանքն ավարտելուց հետո երկու խմբերը համադրում են իրենց աշխատանքը և ներկայացնում համատեղ արդյունք:
- Ուսուցիչը աշակերտներին տրամադրում է համապատասխան հղումներ, համացանցից օգտվելու և աշխատանքը տանը շարունակելու համար՝

<http://deti-online.com/slovar-ustarevshih-slov/>

<http://rvb.ru/18vek/kantemir/02comm/dict.htm>

<http://rusoved.ru/pravila/ustarevshye-slova.html>



Քայլ 3՝ աշխատանքը շարունակվում է տանը: «Ռուսաց լեզու 12-րդ դասարան» էջում ստեղծվում է թեմա-մրցույթ: Ով կարող է ավելի շատ հնացած բառեր նշել: Մրցույթի իմաստը կայանում է արագ արձագանքելու մեջ: Օգտվելով տրված հղումներից, ինչպես նաև բառարաններից, աշակերտները հնարավորինս շատ հնացած բառեր են գրում քննարկումների բաժնում: Ամեն ինչ վերահսկվում է ուսուցչի կողմից:

Քայլ 4՝

Դասաժամ 2

Թեմա՝Նորաբանություններ՝

- Ուսուցչի օգնությամբ աշակերտները հաշվում և դուրս են գրում նախորդ օրվա մրցույթի արդյունքները:
- Հայտարարվում է մրցույթի հաղթողը:
- Ստուգվում է թե աշակերտը իր գրած բառերից քանի բառ է մտապահել :
- Կատարվում է ընդհանուր բլից հարցում անցած թեմայի վերաբերյալ:
- Ուսուցիչը ներկայացնում է նոր նյութը:
- Աշակերտները օգտագործելով համակարգիչը գտնում են համապատասխան տեղեկույթ:
- Նորաբանությունների վերաբերյալ դուրս բերված տեղեկույթը համադրվում է արդեն ունեցած տեղեկույթի հետ:
- Ուսուցիչը տրամադրում է հղումներ աշխատանքը տանը շարունակելու համար:

<http://www.grammar.ru/RUS/?id=6.38>

<http://tapemark.narod.ru/les/331b.html>

<http://www.km.ru/referats/334313-neologizmy-v-sovremennykh-zhurnalistskikh-tekstakh>

<http://academic.ru/dic.nsf/ruwiki/18692>

- Կազմվում են խմբեր, տանը աշխատելու համար: Յուրաքանչյուր խումբը ներառում է մեկ թույլ, մեկ միջին կարողությունների տեր և մեկ ուժեղ աշակերտ:

Քայլ 5՝ աշխատանք տանը

Խմբերին հանձնարարվում է մյուս խմբերից մեկի համար գտնել և տրամադրել հնարավորիս շատ նորաբանություններ, մյուս խումբը բառեր է ընտրում մեկ ուրիշ խմբի համար: Այսպիսով խմբերը ամրապնդում են նոր բառերը միևնույն ժամանակ հիմք ստեղծելով հաջորդ դասաժամին աշխատելու համար: Յուրաքանչյուր թիմին տրամադրված բառերը ճշգրտվում են, բերվում հավասար բառաքանակի և այսքանով աշխատանքն ավարտվում է: Սակայն դասաժամի և ռուսաց լեզվի ուսուցման մասին քննարկումները շարունակվում են:

Քայլ 6

Դասաժամ 3

Թեմա՝ § Փոխառություններ՝

- Նախորդ օրն ընտրված խմբերին հանձնարարվում է գրել շարադրություն ազատ թեմայով, օգտագործելով նախորդ օրը մյուս թիմերի կողմից տրամադրված բառերը:
- Յուրաքանչյուրը թիմի անդամներից մեկը կարդում է իր գրած շարադրությունը
- Տեղի է ունենում ընդհանուր քննարկում, որոշվում է հաղթող թիմը: Ընդ որում հաշվի է առնվում, թե որ թիմն է առավել տեղին ու գրագետ օգտագործել նորաբանությունները շարադրության մեջ:
- Ուսուցիչը ներկայացնում է նոր թեման:
- Այս անգամ ուսուցիչը հղումներ չի տրամադրում, այլ հանձնարարում է աշակերտներին ինքնուրույն գտնել այն հասցեները, որոնցից կարելի է օգտվել փոխառությունների մասին տեղեկություններ ստանալու համար, առաջադրանքներ նորաբանությունների վերաբերյալ:
- Ընտրվում են երեք աշակերտներ, «լիդերներ», հաջորդ քայլի աշխատանքի համար:

Քայլ 7 Աշխատանք տանը:

Աշակերտները քննարկման բաժնում ներկայացնում են այն հղումները, որոնցից պետք է օգտվել աշխատանքի ընթացքում: Ուսուցիչը դիտում է բոլոր հղումները, հեռացնում ավելորդները: «Լիդերները» գտնում և տեղադրում են փոխառնված բառեր, որոնց համարժեքները կան ռուսաց լեզվում: Աշակերտներին հանձնարարվում է գտնել և տեղադրել տվյալ բառերի ռուսերեն համարժեքները:



Քայլ 8

Դասաժամ 4

Թեմա՝ § Միջազգային բառակազմիչ մասնիկներ/

- Ամփոփվում են նախորդ օրվա աշխատանքի արդյունքները:
- Ուսուցիչը ներկայացնում է նոր նյութը:
- Աշակերտները իրենց մոտ գրի են առնում միջազգային բառակազմիչ մասնիկները
- Գրում են այդ մասնիկներով կազմված մի քանի օրինակ
- Աշակերտներին հանձնարարվում է օգտվելով համացանցից գտնել այդ մասնիկներով կազմված հնարավորինս շատ բառեր և այդ բառերը ներկայացնել համացանցի իրենց էջում

Քայլ 9 Աշխատանք տանը:

Ուսուցիչը նախօրոք դիտում է աշակերտների կողմից էջում ներկայացված բառերը; Աշակերտներին հանձնարարվում է այդ բառերից ընտրել բառեր, որոնք ունեն նախորդ երեք թեմաներին առնչվող բառերի ընդհանրությունները: Առցանց աշակերտներին հանձնարարվում է հաջորդ դասաժամի թեմայի համար գրուցել ուսուցիչների հետ նրանց դասավանդած առարկայի շուրջ և գրի առնել բոլոր գիտական տերմինները, որոնք նրանք օգտագործում են իրենց խոսքում:

Քայլ 10

Դասաժամ 5

Թեմա՝ § Գիտական տերմիններ/

- Դասաժամը սկսվում է նախորդ օրվա հանձնարարության կատարման ստուգումից: Աշակերտները կարդում են իրենց գրառած բոլոր բառերը:
- Ուսուցիչը ներկայացնում է նոր թեման:
- Խմբային աշխատանք՝ աշակերտները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է գրել որևէ գիտական ոլորտի վերաբերվող բառեր:
- Աշխատանքը ստուգվում է մյուս թիմերի կողմից;

Քայլ 11

Ամփոփում

Աշակերտները բաժանվում են 5 խմբի, յուրաքանչյուր թիմի հանձնարարվում է 10 թույլում նախապատրաստել և ներկայացնել ուսումնասիրած թեմաների մեկը: Աշակերտների կողմից թեմաների ներկայացնելուց հետո ուսուցիչը կազմակերպում է քննարկում թեմաների վերաբերյալ:

Քայլ 12 Արդյունքների ամփոփում, աշխատանք տանը

Ուսուցիչը նախօրոք էջում տեղադրում է թեստային աշխատանքի էլեկտրոնային տարբերակը: Աշակերտներին թեստային աշխատանքը կատարելու համար տրվում է 90 թույլ ժամանակ: Աշակերտները իրավունք ունեն օգտվել ցանկացած աղբյուրից: 90 թույլ անց թեստերի պատասխանները պետք է դրված լինեն քննարկումներ բաժնում: Ուսուցիչը տեղադրում է ճիշտ պատասխանները: Աշակերտները ստուգում են իրենց աշխատանքը, դուրս գրում միավորները, քննարկում սխալները:

Քայլ 13

Նույ աշխատանքը, որը աշակերտները կատարել են տանը, էլեկտրոնային տարբերակով, կատարում են դասարանում, առանց որևէ աղբյուրից օգտվելու: Աշխատանքի կատարման համար տրվում է 90 թույլ ժամանակ: Աշխատանքը ստուգվում է տեղում, աշակերտների մասնակցությամբ: Քննարկվում են սխալները, համեմատվում երկու աշխատանքերի արդյունքները:


Կազմակերպվում է քննարկում, որի ընթացքում աշակերտները պատասխանում են հետևյալ հարցերին՝

- Ինչ սովեց ինձ այս գիտափորձը
- Ինչ սովորեցի
- Ինչ թերություններ էին առկա
- Որն է նմանատիպ- դասի առավելությունը
- Կցանկանայի շարունակել նման միջոցներով ուսուցումը

3. Արդյունքների վերլուծություն և ամփոփում

Համարելով փորձը հաջողված, ամփոփենք արդյունքները:


Նախ պարզենք, թե ինչ նպատակ էր հետապնդում փորձը: Նպատակները ներկայացնենք բուրգի տեսքով, երեք շերտով ըստ կարևորության:




Այժմ պարզենք թե որքանով է իրականացվել գիտափորձի առջև դրված նպատակները: Մկսենք երրորդ կետից՝ ինքնուրույն աշխատանք:

Գիտափորձի ընթացքում ուսուցիչը նախ ընտրելով ուղղորդողի դերը, աստիճանաբար կատարվելիք ողջ աշխատանքի պարտականությունը տեղափոխում է աշակերտների վրա: Այնպես որ աշակերտները ինքնուրույն աշխատանքի անցնում են նախ անգիտակցորեն, ապա վարժվում են: Փորձի նկարագրությունը ցույց է տալիս, որ աշակերտների ինքնուրույն աշխատանքի մակարդակը բավականին բարձր է, քանի որ համացանցից օգտվելու փաստը ինքնին աշակերտին մղում է ինքնուրույն աշխատանքի, ինչի հանարավորությունը փոքր է ավանդական դասի դեպքում: Այսինքն եթե սովորական դասաժամին աշակերտը ինքնուրույն աշխատանք կատարում է առավելագույնը 20 րոպե, ապա համակարգչի օգտագործման դեպքում, հատկապես տվյալ գիտափորձում նկարագրված մեթոդով, աշակերտը հանարավորություն ունի կատարել ինքնուրույն աշխատանք այդ 20 րոպեին գումարած հարաբերականորոն անսահմանափակ ժամանակահատված: Բացի այդ աշակերտը ինքն է գնում ինքնուրույն աշխատանքի, ինքն է ձգտում թեկուզ մեկ քայլ առաջ անցնել:

Ավանդական դասի դեպքում կատարվող աշխատանքների գրաֆիկը ըստ տոկոսների



Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ դասի ժամանակ կատարվող աշխատանքների գրաֆիկ ըստ տոկոսների



Աշխատանք դասարանում


Աշխատանք տանը

Այսպիսով աշակերտին ինքնուրույն աշխատանքի մղելու նպատակը կարելի է համարել իրականացված:

Հաջորդ նպատակը՝ ուսուցման արդյունավետության բարձրացումը, բնականաբար կախված է նախորդ նպատակից այսինքն եթե բարձրանում է ինքնուրույն աշխատանքի մակարդակը, բարձրանում է նաև ուսուցման արդյունավետությունը: Նախքան գիտափորձը և գիտաձորձից հետո տրված թեստային աշխատանքների արդյունքների տարբերությունը ևս վկայում է այն մասին որ համակարգչային միջոցների օգտագործմամբ ուսուցման արդյունավետությունը բարձրանում է:

Նախքան գիտափորձը նույն թեմայի շուրջ տրված թեստային աշխատանքից ստացած միջին գնահատականը ստացվում էր 10 միավորանոց սանդղակով մոտ 6 միավոր, իսկ գիտափորձից հետո տրված գրավոր աշխատանքի միջին գնահատականը ստացվեց 8 միավոր:

Այսպիսով առաջադիմության կորը կունենա հետևյալ տեսքը:



Եվ գլխավոր նպատակը՝ բարձրացնել աշակերտների ակտիվությունը, դասին մասնակցությունը, հետաքրքրությունը առարկայի և թեմայի շուրջ, խմբով աշխատելու ունակությունը:

Ինքնուրույն աշխատանքի մակարդակի բարձրացման մասին արդեն խոսվեց:


Աշակերտների ակտիվությունը գիտափորձի ընթացքում գտնվում էր բարձր մակարդակի վրա, աշակերտները փնտրում, գտում էին տեղեկույթ, կատարում էին վերլուծություններ, առանձնացնում կարևոր տեղեկույթն անկարևորից, վերահսկում միմյանց աշխատանքը: Ի շնորհիվ տանը աշխատելու աշակերտները անընդհատ գտնվում էին շարժման մեջ, օրվա ընթացքում ուսումնասիրած թեման անընդհատ շրջանառվում էր, ինչի արդյունքում էլ աշակերտների ակտիվությունը գրեթե չէր նվազում:

Գիտափորձի ընթացքում շատ առաջադրանքների կատարում պարտադրում էր աշխատել խմբերով, թե դասի շրջանակներում, թե էլեկտրոնային տարբերակով:

Խմբերով աշխատելը աշակերտների մոտ գտնվում էր ամենաբարձր մակարդակի վրա: Այս դեպքում իհարկե շատ կարևոր է խմբերի ճիշտ բաշխումը: Ճիշտ խմբաբաժանման դեպքում աշխատանքը հեշտանում է: Սակայն առավել կարևոր է աշակերտների խմբերով աշխատելու ունակությունը: Աշակերտները պետք է կարողանան թե աշխատել համատեղ, թե գնահատել մեկ այլ թիմի աշխատանքը: Էլեկտրոնային շփումը նպաստում է համատեղ աշխատանքին նրանով, որ աշակերտները չեն տեսնում միմյանց և թերությունները նշելը դառնում է դյուրին: Բացի այդ աշակերտները հաղորդակցվում են ավելի ազատ և անկաշկանդ:

Գիտափորձի հանդեպ հետաքրքրությունը անգամ անակնկալի բերեց, աշակերտները ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն, դա առաջին քայլն էր, որից ելնելով պետք էր հետաքրքրություն առաջացնել նաև առարկայի հանդեպ: Դա ավելի հեշտ էր քան սպասվում էր: Անխոս սոցիալական կայքերը այսօր ամենաշատն են հետաքրքրում դեռահասներին, սակայն մտավախություն կար, որ աշակերտները կարող են չհանդուրժել «ներխուժում իրենց անձնական գոտի»: Կամ կայքը նման դրսևորմամբ կարող էր մեղմ ասած ոչ այնքան հետաքրքիր լինել: Սակայն ամեն ինչ այլ կերպ էր: Աշակերտները մեծ հաճույքով ընդունեցին ռուսաց լեզու առարկան իրենց անձնական գոտում, անձամբ զբաղվեցին էջի ձևավորմամբ, հաճախակի նկարներ, նյութեր էին ավելացնում:

Եվս մեկ կարևոր փաստ, այն որ իրենք համարվում են մի շատ կարևոր աշխատանքի մասնակից, ավելի էր մեծացնում նրանց հետաքրքրությունը: Գիտափորձի ողջ ընթացքում ռուսաց լեզու առարկան գտնվում էր կենտրոնական դիրքում և բոլորի հետաքրքրությունների կենտրոնում:



Այսպիսով գիտափորձի ընթացքում

- Լուծվեցին մեր առջև դրված բոլոր խնդիրները,
- Իրականացվեցին բոլոր մտահղացումները
- Կատարվեց մեծ ծավալի աշխատանք աշակերտների մասնակցությամբ
- Աշակերտների առօրյան տեղափոխվեց ուսուցման ոլորտ
- Երկարացվեց աշակերտների ուսուցման ժամանակահատվածը
- Աշակերտները ներգրավվեցին կազմակերպչակա աշխատանքների մեջ
- Փոփոխվեց աշակերտների կրթական առօրյան

Գիտափորձի արդյունքում

- Փոխվեցին աշակերտների պատկերացումները ուսուցման վերաբերյալ
- Լրացվեց այն բացը, որն առաջացել էր աշակերտների և ուսուցիչների միջև
- Աշակերտները սկսեցին ավելի ակտիվ մասնակցություն ցուցաբերել դասերին

- Դասաժամի ընթացքում և հետագա աշխատանքների ժամանակ մասնակցում էին բոլոր աշակերտները, անկախ մակարդակից
- Բարձրացավ աշակերտների ինքնուրույն աշխատանքի մակարդակը
- Աճեց հետաքրքրությունը առարկայի հանդեպ

Նշեմ որ գիտափորձի ընթացքում հետաքրքրություն ցուցաբերում էին ոչ միայն գիտափորձի մասնակից 12-րդ դասարանցիները, այլ նաև դպրոցի մյուս աշակերտները, որոնք նույնպես ցանկություն հայտնեցին ունենալ սեփական էջ:

Ընդհանրապես ցանկացած ուսումնասիրություն ցանկացած ոլորտում, ցանկացած գիտափորձ հետապնդում է նպատակ ավելացնել թեկուզ մեկ կաթիլ նորույթ կրթության հսկայական ծովին, ինչ-որ բան փոխել դեպի ավելի լավը, թեկուզ մեկ քայլով մոտենալ կատարելությանը, տալ մարդկությանը պիտանի, անհրաժեշտ ինչ-որ բան, եթե գիտափորձը այս նպատակներին չի հասնում, ուրեմն այն կարելի է որակել ձախողված:

Իսկ ի՞նչ տվեց այս գիտափորձը, ի՞նչ ավելացրեց այն համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ոլորտում, ո՞րքանով լուծեց իր առջև դրված խնդիրները:

Ի սկզբանե կար այն մտավախությունը, որ փորձը կձախողվի, կամ առնվազն չի ստացվի այն արդյունքը, որն ակնկալվում էր, սակայն արդյունքն ավելի քան գոհացուցիչ էր, բոլոր տեսանկյուններից: Նախ նշենք որ, այնպիսի մի գյուղական դպրոցում որտեղ անցկացվում էր գիտափորձը, ներառել աշակերտներին նման գիտափորձի մեջ, արդեն իսկ մի փոքրիկ ներդրում էր կրթության ոլորտում: Այն խանդավառություն, ոգևորվածությունը, և թույլ կտամ ինձ ասել տոնական տրամադրությունը, որը տիրում էր դասարանում և արողջ դպրոցում, նոր թափ տվեց աշակերտների սովորելու ձգտմանը: Բացի այդ աշակերտները, որոնք մինչ այժմ չէին կարող պատկերացնել սոցիալական կայքի նման կերպ օգտագործման հնարավորությունը, գիտափորձից հետո անգամ շարունակում էին կատարել տնային առաջադրանքները կայքի օգնությամբ, օգնելով միմյանց: Սա կարծում եմ ձեռքբերում է, երբ աշակերտը որպես ուսուցման միջոց օգտագործում է այն միջոցը, որը շատերի կողմից համարվում էր շեղող, վնասակար:

Կարծում եմ կգտնվեն մանկավարժներ, ովքեր կցանկանան օգտագործել այս մեթոդը, գուցե ընտրելով ավելի հետքերի միջոցներ:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով համակարգչային տեխնոլոգիաների կիրառման դիդակտիկ պայմանները ուսումնական հաստատություններում, նրանց դերը կրթության ոլորտում, էությունը, բովանդակությունը և կառուցվածքը, ինչպես նաև հիմնական ֆունկցիաները և կիրառման ուղիները, պարզեցինք, որ համակարգչային տեխնոլոգիաների դերը կրթության ոլորտում չափազանց մեծ է, հատկապես տեղեկատվայնացման այս շրջանում: Գաղտնիք չէ, որ այսօր ցանկացած ոլորտում

ցանակացած գործունեության մեջ համակարգչային տեխնոլոգիաները անհրաժեշտություն են: Առավել ևս կրթության ոլորտը, որտեղ համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը ցանկալիից գնում է դեպի պարտադիրը:

Անցկացվեցին բազմաթիվ հարցումներ ուսուցիչների և աշակերտների շրջանակներում, , հարցազրույցներ համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ոլորտի մասնագետների հետ և այս ամենի արդյունքում պարզ դարձավ որ, բոլորն են գիտակցում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման գերանհրաժեշտությունը ժամանակակից դարում, և արվում է ամեն ինչ դրանց կիրառումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Տվյալ աշխատանքը նպատակ ուներ փնտրել նոր ավելի մատչելի և աշակերտներին ավելի հասանելի կիրառման միջոց, ինչի պատճառով թվ փորձ կատարվեց օգտագործել աշակերտին ավելի հետաքրքրող սոցիալական կայքերը, որպես ուսուցման միջոց: Կատարված փորձի ընթացքում պարզվեց, որ համակարգչային տեխնոլոգիաների և մասնավորապես սոցիալական ցանցերի օգտագործումը որպես ուսուցման միջոց կարող է ունենալ մեծ արդյունավետության, եթե ուսուցիչը տիրապետի կիրառման հմտություններին, կարողանա ճիշտ եղանակով կիրառել դրանք դասի շրջանակներում, եթե աշակերտը գիտակցի, թե ինչ է պահանջվում իրենից, որն է իր դերը և որքանով է այդ դերը ահամապատասխանում իրեն: Անշուշտ նման մեթոդն ունի նաև իր բացասական կողմերն ու թերությունները, քանզի գործ ունենք ոչ լիարժեք վերահսկելի մի համակարգի հետ, սակայն այն փաստը, որ հնարավոր է աշակերտին վնասակար, շեղող մի ասպեկտ շուռ տալ գլխիվայր և դարձնել օգտակար և ուսուցանող, ապացույցն է այն բանի որ կարողացել ենք հասնել մեր առջև դրված նպատակին:

Այսպիսով աշխատանքի շրջանակներում կատարված գիտափորձի արդյունքում կարողացանք կատարել փոքրիկ ներդրում ուսուցման բնագավառում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման հսկայական բազայում, որում էլ կայանում էր տվյալ աշխատանքի նպատակը

Օգտագործված գրականության ցանկ

1. Գեյն Ա.Գ. Սենտկոսով Ա.Ի. Յունեբման Ն.Ա Ինֆորմատիկա Երևան 2002
2. Գիտամեթոդական ամսագիր Ընտանիք և դպրոց 2.2012 Երևան 2012
3. Գիտամեթոդական ամսագիր Մանկավարժություն 2.2013
4. Գիտամեթոդական ամսագիր Մանկավարժություն 5.2011
5. Մաշուրյան Ժ. Գյուլնազյան Վ Ավանեսյան Ա Համակարգիչը և սովորողների առողջությունը Երևան 2011
6. Մինասյան Մ. Մինասյան Ա Հարությունյան Ա Համացանցի օգտագործման ուղեցույց Երևան 2009
7. Ջանփոլադյան Բ. “Նոր կրթական տեխնոլոգիաներ” Երևան 200
8. Апатова Н.В. Информационные технологии в школьном образовании. М 1994.
9. Беспалько В.П. Педагогика и прогрессивные технологии обучения. - М.,1995
10. Беспалько В.П. Программированное обучение (дидактические основы). М., 1970.

11. Гершунский Б.С. Компьютеризация в сфере обучения: проблемы и перспективы. - М.: Педагогика, 1987.
12. Андрей Петрович Ершов Статья (на основе доклада) "Опыт применения ЭВМ в школьном учебном процессе"; конференция в Свердловске, 1985 г.
13. Извозчиков В.А. Новые информационные технологии обучения. С.Пб., 1991.
14. Калягин И., Михайлов Г. Новые информационные технологии и учебная техника // М.1996. - №1.
15. Капустина Т.В. Теория и практика создания и использования в педвузе новых информационных технологий М., 2001.